ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ուսանողների բավարարվածությունը
2019-2020 ուստարում իրականացված առցանց ուսուցումից
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

26.06.2020թ.

2020թ. մարտի 13-ից ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում՝ ելնելով Հայաստանում նոր կորոնավիրուսով ստեղծված իրավիճակից, ուսումնառությունը շարունակվել է առցանց: Ուսումնառության առցանց կազմակերպումը նորություն էր մասնաճյուղի ղեկավարության, ուսանողների և դասախոսների համար: Մասնաճյուղի ղեկավարության և համապատասխան աշխատակազմի ջանքերի շնորհիվ առցանց ուսումնառությունը կազմակերպվել է անխափան, ըստ դասացուցակների: Ղեկավարությունը, անհրաժեշտության դեպքում, տեխնիկական միջոցներով աջակցել է դասախոսներին և ուսանողներին՝ նպատակ ունենալով առցանց ուսումնառությունը հասանելի դարձնել բոլորին: Դասախոսական կազմը ջանացել է առցանց ուսումնառությունը դարձնել հետաքրքիր և հագեցած՝ նպատակ ունենալով ամբողջությամբ ուսանողներին հասցնել պլանավորված վերջնարդյունքները, ապահովել համապատասխան գիտելիքների մատուցումը, առցանց դասավանդման և ուսումնառության կոնկրետ մեթոդներով նպաստել նրանց մասնագիտական կարողությունների ձևավորմանը:

Պարզելու համար, թե 3-ամսյա առցանց կրթության ընթացքում ինչքանով են իրականացվել մասնաճյուղի ղեկավարության և դասախոսների նպատակները, մասնաճյուղի մասնագիտական կրթության որակի ապահովման բաժինը հունիսի սկզբին ուսանողների շրջանում իրականացրել է առցանց հարցում (մասնաճյուղից բավարարվածության ամենամյա հարցումների փոխարեն): Այդ ուսումնասիրությունը նպատակ ուներ պարզելու ուսանողների բավարարվածությունը մասնաճյուղում իրականացվող առցանց ուսումնառությունից, վեր հանելու առաջացած խնդիրները և հավաքագրելու ուսանողների առաջարկներն առցանց ուսուցման հետագա բարելավման համար (եթե դրա անհրաժեշտությունը լինի):

Ուսումնասիրությունն իրականցվել է առցանց հարցման միջոցով: Հարցմանը մասնակցել են մասնաճյուղի առկա ուսուցման 1-3-րդ կուրսերի բոլոր կրթական ծրագրերի թվով **371** ուսանողներից **289-ը** (գրեթե **80%-ը**), ինչը իհարկե մասնակցության լավ ցուցանիշ է.

Ընդհանուր մասնակցությունը՝ 289 ուսանող 371-ից	**քանակը**		**Տոկոս**	
	Ընդհ.	**Մասն. է**	**Ընդհանու-թում**	**ՄԿԾ-ում**
Օտար լեզու և գրականություն /ԱԼԳ, ՖԼԳ/	64	54	19%	**84.4%**
Դեկորատիվ կիրառական արվեստ /ԴԿԱ/	9	8	3%	**88.9%**
Դիզայն	36	22	8%	**61.1%**
Զբոսաշրջություն	27	20	7%	**74.1%**
Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա /ԻԿՄ/	65	34	12%	**52.3%**
Հայոց լեզու և գրականություն /ՀԼԳ/	19	17	6%	**89.5%**
Պատմություն	25	19	7%	**76.0%**
Ռուսերեն լեզու և գրականություն /ՌԼԳ/	3	3	1%	**100.0%**
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա /ՏՄՄ, Հոգեբ./	75	69	24%	**92.0%**
Քարտեզագրություն և կադաստրային գործ /ՔԿԳ/	5	5	2%	**100.0%**
Ֆինանսներ	43	38	13%	**88.4%**
Ընդամենը՝	**371**	**289**		**77.9%**

Այս արդյունքները վկայում են այն, որ մեր ուսանողներն ընդհանուր առմամբ, տեղեկացված են մասնաճյուղում առցանց հարցումներ անցկացնելու մշակույթից և ակտիվ մասնակցում են դրանց: Իսկ հարցման արդյունքների վերլուծությունը վկայում է, որ այս հարցման նկատմամբ հետքրքրությունը բավականին մեծ է եղել և արձագանքները շատ:

Հարցման մեջ ներառվել են հարցեր, որոնց միջոցով ցանկացել ենք պարզել առցանց դասընթացներին ուսանողների մասնակցության մակարդակը և մասնավորապես չմասնակցելուն, կամ ոչ լիարժեք մասնակցելուն խոչընդոտող պատճառները, դիտարկել դասախոսների կողմից կիրառվող տեղեկատվական համակերգերի և ռեսուրսների ցանկը և նրանց կողմից ուսանողներին տրամադրվող ուսումնական նյութերի տեսակները: Հարցումը նպատակ ուներ պարզելու ուսանողների բավարավածությունը առցանց ուսումնառությամբ ձեռք բերած գիտելիքներից և մասնագիտական կարողություններից, և գնահատելու նրանց կարծիքը առցանց ուսուցմամբ դրանց ապահովման վերաբերյալ: Առանձնակի ուշադրություն է դարձվել նաև դասախոսների կողմից առցանց ուսուցման ժամանակ ուսանողների ինքնուրույն աշխատանքների կազմակերպման, ուսանողների ընթացիկ ձեռքբերումների գնահատման վերաբերյալ ուսանողների կարծիքի ուսումնասիրմանը և այլն:

Ներկայացնենք առցանց կրթությունից մասնաճյուղի ուսանողների բավարարվածության արդյունքների վերլուծությունը, իսկ ամբողջական արդյունքներն ըստ կրթական ծրագրերի ներկայացված են մասնաճյուղի պաշտոնական կայքի «Կրթության որակի կառավարում» բաժնի «Հարցման արդյունքներ» ենթաբաժնում (2019-20 ուստարի):

1. **Ուսանողների ներգրավվածությունը առցանց դասընթացներին և կիրառվող տեղեկատվական հարթակները**

Ստեղծված արտակարգ իրավիճակում ուսանողների արձագանքը և մասնակցությունը առցանց դասընթացներին կարելի է համարել բավարար: Տարբեր կրթական ծրագրերով իրակա-նացված դասընթացներին ուսանողների ներգրավվածությունը տատանվում է 40-88% միջև:



Իսկ ընդհանուր առմամբ դասընթացներին 75-100% մասնակցություն ապահովել են ուսանողների մոտ 87%-ը (251-ը), ինչը կարելի է համարել գոհացուցիչ արդյունք՝ հաշվի առնելով մասնաճյուղում առցանց դասերի առաջին անգամ իրականացնելու փաստը: Նման բարձր արդյունքը փաստում է մասնաճյուղի պրոֆեսորա-դասախոսական կազմի ճկուն աշխատելաոճի և ուսանողների պատրաստա-կամության մասին: Օրինակ, ըստ հարցման արդյունքների «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» և



«Հոգեբանություն» կրթական ծրագրերի հարցմանը մասնակցած **69** ուսանողների **74%-ը** (51-ը) մասնակցել է բոլոր դասերին, ինչը վստահեցնող ցուցանիշ է, և վկայում է, որ առցանց ուսումնառությունը նրանց համար եղել է մատչելի, հասանելի և նաև ցանկալի:

Հարցման արդյունքներով առցանց դասընթացները հիմնականում (**99,7%**) իրականացվել են ZOOM հարթակում: Այդ համակարգի օգտագործման պարզությունը և գործիքները (տեսազանգ, առցանց գրատախտակ, էկրանի ընդհանուր օգտագործում և այլն) նրան դարձրել են պահանջված: Տեղեկատվական համակարգերից բարձր կիրառելիություն է ունեցել նաև էլ. փոստը՝ դասերից դուրս ուսանող-դասախոս համագործակցության, ուսումնական նյութերի, ինքնուրույն առաջադրանքների փոխանցման համար:



2. Անհրաժեշտ գիտելիքների և մասնագիտական կարողությունների ձեռքբերումը

Հարցմանը մասնակցած ուսանողների գրեթե **82%-ը** փաստել է, որ առցանց ուսուցումն ընդհանուր առմամբ ապահովում է անհրաժեշտ **գիտելիքների ձեռքբերումը**, այդ թվում **51,7 %-ը** գտնում է, որ ապահովվում է մասամբ:



Հարցմանը մասնակցած ուսանողների **30.6%-ը** գտնում է, որ առցանց ուսումնառությամբ հնարավոր չէ ձեռք բերել մասնագիտական անհրաժեշտ **կարողություններ:** Մասնավորապես, բաց հարցերում նրանք կարծիք են հայտնել, որ գործնական դասընթացներում, գործնական առաջադրանքների կատարման համար հնարավոր չէ ապահովել անհրաժեշտ հմտությունների ձևավորում: Սակայն արդյունքները վկայում են, որ նման խնդիր կա մի քանի յուրահատուկ կրթական ծրագրերի իրականացման շրջանակներում, ինչպիսիք են «Դեկորատիվ կիրառական արվեստ», «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա», «Քարտեզագրություն և կադաստրային գործ»:



Ընդհանրացնելով նշենք, որ հարցմանը մասնակցած ուսանողների գրեթե **85%-ը** նշել է, որ առցանց ուսուցումը ընդհանուր առմամբ ապահովում է արդյունավետ ուսուցում, թեպետ այդ թվում **50%-ը** գտնում է, որ դա ապահովվում է մասամբ:

3. Ուսումնական նյութերի աղբյուրները և ռեսուրսները

Ակնհայտ է, որ ուսումնառության ընթացքում միայն դասախոսի մեկնաբանություններն ու վերլուծությունները բավարար չեն ուսանողների կողմից լիարժեք գիտելիքների և մասնագիտական կարողությունների ձևավորման համար: Դասախոսներն ուսանողներին տրամադրում են անհրաժեշտ ուսումնական նյութեր, գրականություն, տեսանյութեր, շնորհանդեսներ, լրացուցիչ դիդակտիկ նյութեր և այլն: Իհարկե ժամանակակից տեղեկատվական դարում այդ նյութերի շարքում իրենց առանձնահատուկ տեղն ունեն էլեկտրոնային ուսումնական նյութերը, որոնք իրենց արագ հասանելիությամբ ինչ որ չափով դուրս են մղել գրքերին: Այդ մասին են վկայում նաև հարցման արդյունքները: Ուսանողները փաստում են, որ դասախոսները որպես ուսումնական նյութ հիմանականում տրամադրում են իրենց դասախոսությունները (**87,5%**) և շնորհանդեսները (**36,1%**), նաև էլեկտրոնային դասագրքեր (**63,5%**): Դասախոսների կողմից տրամադրվող ուսումնական նյութերն աջակցում են ուսանողին ինքնակրթության և ինքնազարգացման գործում, ուղղորդում են կողմնորոշվելու համացանցային լայն տիրույթում, վերցնելու կարևորը և արդիականը:



Ուսումնական նյութերի շարքում կարևորվում են նաև մասնաճյուղի էլեկտրոնային գրադարանի պաշարները: Դասախոսներն իրենց դասընթացների փաթեթներում (պորտֆոլիոներում), որոնք տրամադրվում են նաև ուսանողներին, պարտադիր նշում են մասնաճյուղի գրադարանում առկա գրականության մասին: Չնայած մասնաճյուղի գրադարանային պաշարները մշտապես համալրվում են ժամանակակից գրականությամբ,

պարտադիր թվայնացվում և ուսանողներին է տրամադրվում պահանջարկ ունեցող մասնագիտական գրականությունը, այնուամենայնիվ նախորդ տարիների տարբեր ուսումնասիրությունների արդյունքներով ուսանողները մշտապես բավարարված չեն եղել գրադարանում առկա մասնագիտական գրականության որակից և քանակից: Առցանց ուսումնառության պայմաններում, ակնհայտ է, առավել կարևորվում են գրադարանի էլեկտրոնային պաշարները: Այս ուսումնասիրության արդյունքները փաստում են, որ հարցմանը մասնակցած ուսանողների **39%-ը** հիմնականում բավարարված է էլեկտրոնային գրադարանի պաշարներից, **42,7%-ը՝** բավարարված է մասամբ, իսկ **18,1%-ին՝** գրադարանի պաշարները չեն բավարարում:



Մասնաճյուղի էլեկտրոնային գրադարանի պաշարները, մասնավորապես, չեն բավարարել «Դեկորատիվ կիրառական արվեստ», «Քարտեզագրություն և կադաստրային գործ» և «Ֆինանսներ» կրթական ծրագրերի ուսանողներին: Իսկ հարցմանը մասնակցած «Պատմություն» կրթական ծրագրի ուսանողների **63%-ին** էլ.գրադարանի պաշարները հիմնականում բավարարում են:

Նշենք, որ այս հարցման շրջանակներում կարևորվել է, թե առցանց ուսուցման պայմաններում դասավանդման և ուսումնառության ո՞ր ձևերն են ըստ ուսանողների եղել արդյունավետ: Այստեղ ուսանողների կարծիքները բազմազան են, և կարելի է ասել գրեթե հավասարաչափ նշվել են ինչպես գործնական դասընթացները (**88 ուսանող**), դասախոսությունները (**87 ուսանող**), սեմինար պարապմունքները (**36 ուսանող**), այնպես էլ ինքնուրույն աշխատանքները (**69 ուսանող**): Ընդամենը **4 ուսանող** նշել է, որ առցանց ուսուցման պայմաններում դասավանդման և ուսումնառության ոչ մի ձև արդյունավետ չէ:



4. Ընթացիկ ծանրաբեռնվածությունը և գնահատումը

Առցանց ուսուցման պայմաններում մեծագույն խնդիր է լսարանին մշտապես ուշադրության կենտրոնում պահելը, նրանց ակտիվ մասնակցության ապահովումը, որում քիչ չէ նաև ուսանողների պատրաստակամությունն ու ցանկությունը՝ դառնալու մասնակից քննարկումներին, տալ հարցեր և պատասխանել հարցերին:

Նշենք, որ հարցման մասնակից ուսանողներն անկեղծորեն նշել են դասերին իրենց ներգրավվածության և ակտիվության մասին, մասնավորապես նրանց պատասխանները փաստում են, որ նրանց հիմնական մասը (**67,7%-ը**) առցանց ուսուցման ժամանակ ավելի շատ լսել է դասախոսին և երբեմն տվել հարցեր կամ պատասխանել դասախոսի տված հարցերին, և միայն նրանց **32%-ն** է մշտապես ակտիվ մասնակցել դասին՝ հաճախակի տալով հարցեր և պատասխանելով դասախոսների հարցերին:



Այս արդյունքները մտածելու տեղիք են տալիս: Նախ, ծանոթ լսարանի դեպքում կարելի է փաստել, որ նախկինում ակտիվ ուսանողներն ակտիվ են նաև առցանց ուսուցման ժամանակ: Անծանոթ լսարանի դեպքում միգուցե դժվար է ըմբռնել մի շարք ուսանողների պասիվությունը: Հակված ենք մտածելու, որ անտարբերությունը չէ նրանց պասիվության պատճառը, միգուցե կան այլ տեխնիկական, ծրագրային, սոցիալական պատճառներ, որոնք խանգարում են նրանց մի մասին ակտիվ ներգրավված լինել դասին: Սրանք խնդիրներ են, որոնց մասին պետք է մտածել և պատրաստ լինել լուծելու դրանք, եթե նորից առցանց ուսուցման անհրաժեշտություն լինի:

Սովորելու և ձեռքբերումներն ամրապնդելու համար առցանց ուսումնառությունը ենթադրում է ուսանողների ավելի շատ ինքնուրույն աշխատանք, ինքնակրթություն և ինքնաարտահայտում: Դասախոսներն իրենց ընթացիկ առաջադրանքներով նրանց համար ապահովում են ինքնուրույն աշխատելու որոշակի տիրույթ և ծավալ:

Ուսումնասիրության շրջանակներում անհրաժեշտ էր պարզել, թե առցանց ուսուցման ընթացքում ըստ ուսանողների նրանց ինքնուրույն աշխատանքի ծավալը ինչպես է փոխվել: Եվ ինչն էր հետաքրքիր, որ հարցմանը մասնակցած ուսանողների **56,6%-ը** գտնում է, որ իրեն ինքնուրույն աշխատելու ծավալն ավելացել է, **13,5%-ը** գտնում է, որ նվազել է, իսկ գրեթե **30%-ը** գտնում է, որ մնացել է նույնը: Հատկապես «Քարտեզագրություն և կադաստրային գործ» և «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» կրթական ծրագրերի ուսանողները նշել են, որ իրենց ինքնուրույն աշխատելու ծավալը նվազել է (համապատասխանաբար **80%-ը և 32%-ը**):



Յուրաքանչյուր դասախոս ուսումնական գործընթացի ավարտին ակնկալում է իր ուսանողներից ստանալ իրենց համատեղ աշխատանքի և գործունեության արդյունքները: Դրանք բացահայտվում են ընթացիկ և եզրափակիչ քննությունների ժամանակ ուսանողների ձեռքբերումների գնահատմամբ: Առցանց ուսումնառությունն ուսանողների գնահատման գործընթացում առաջ է բերել իր խնդիրները, դասախոսներին կանգնեցրել գնահատման նոր արդյունավետ, արդյունահեն ձևեր և մեթոդներ փնտրելու և կիրառելու խնդրի առաջ: Նրանցից յուրաքանչյուրը մշակել է ուսանողների ձեռքբերումների գնահատման իր ռազմավարությունը, ինչի համար կարևորվել է թե՛ ուսանողների ներգրավվածությունն ու ակտիվությունը դասերի ժամանակ, թե՛ կատարած աշխատանքները և այլն:

Հետևաբար, ուսումնասիրության շրջանակներում փորձել ենք պարզել, թե որքանո՞վ են դասախոսներն առցանց ուսուցման ժամանակ իրականացրել առաջադրանքների գնահատում: Հարցման արդյունքներից հետևում է, որ ոչ բոլոր դասախոսներն են կատարել գնահատում: Հարցման մասնակիցների **55,6%-ը** փաստել է, որ միայն մի քանի դասախոսներ են առցանց ուսուցման ժամանակ գնահատում կատարել, **9%-ը** նշել է, որ բոլոր դասախոսները կատարել են գնահատում:



Յուրաքանչյուր դասախոս գիտի, որ ընթացքում ուսանողների ձեքբերումների գնահատումը նախ ապահովում է առավելագույն օբյեկտիվություն և թափանցիկություն, երկրորդ այն մոտիվացնում է ուսանողին, խթանում նրա սովորելու ցանկությունը և այլն: Հարցման արդյունքները վկայում են, որ ուսանողն ինքը նպատակադրված է, որ դասախոսը գնահատի իր աշխատանքը, հնարավորություն տա դրսևորելու իր ձեռքբերումները, այդ պատճառով էլ արտահայտել են իրենց դժգոհությունը, փաստելով, որ դասախոսների մեծ մասը գնահատում չի իրականացնում:

5. Քննությունների անցկացման ձևերը և ակադեմիական ազնվության պահպանումը

Այլ հարց է, թե առցանց քննությունների ժամանակ ուսանողի ձեռքբերումների գնահատման ո՞ր ձևը թույլ կտա ճիշտ գնահատել ուսանողին: Այս հարցում նույնպես ուսանողները եղել են առավել ազնիվ և ինքնատիպ, ընդ որում գրեթե հավասար չափով կարևորվել են թեստային, համակցված և միայն բանավոր քննությունների ձևերը: Միայն **6,6%-ն** է նշել գրավոր քննությունը որպես ուսանողների ձեռքբերումների ճիշտ գնահատելու միջոց:



Նշենք, որ մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի կողմից մասնաճյուղի դասախոսների համար իրականացվել են վերապատրաստման դասընթացներ Google ձևաչափի հնարավորությունները առցանց քննությունների համար կիրառելու վերաբերյալ: Դասախոսների հիմնական մասն այն կիրառել է թեստային քննություններ անցկացնելու համար: Մասնավորապես, դասախոսները բավականին զոհ էին դասընթացից, գտնում էին, որ այն իսկապես կօգնի իրենց առցանց կազմակերպել քննությունները և կիրառել տարբեր մեթոդներ: Բերված արդյունքները վկայում են այդ մասին, որովհետև ըստ ուսանողների դասախոսները քննությունների համար կիրառել են գնահատման թե՛ թեստային, թե՛ բանավոր, և թե՛ համակցված ձևերը:

Սակայն պետք է խոստովանել, որ չնայած դասախոսների ջանքերին, կիրառած տարբեր մեթոդներին և մոտեցումներին, միևնույնն է հնարավոր չի եղել խուսափել անազնիվ ճանապարհով գնահատական ստանալու տարբերակից; Այդ մասին փաստել են ուսանողները: Նրանց **70%-ը** գտնում է, որ առցանց քննությունների ժամանակ <u>հնարավոր չէ ապահովել</u> **ակադեմիական ազնվություն**: Դրան աջակցում են տեխնիկական տարբեր միջոցների կիրառումը ուսանողների կողմից, որոնց առցանց վերահսկելը գրեթե անհնար է; Այստեղ դասախոսները բավականին աշխատանք ունեն կատարելու: Երևի պետք է հրաժարվել ուսանողների ձեռքբերումները գնահատելու դասական մեթոդներից, պետք է վերանայել քննական տոմսերը, փոխել մոտեցումները, ներառել ավելի շատ ուսանողների վերլուծական մտքի և եզրահանգումներ կատարելու կարողությունները բացահայտող հարցեր և առաջադրանքներ, և գնահատել ուսանողի մտածողությունը, ոչ թե միայն գիտելիքը:

Ընդհանրացնելով հարցման արդյունքները կարելի է եզրակացնել, որ մասնաճյուղում հաջողվել է արդյունավետ իրականցնել առցանց ուսուցում, ապահովել գիտելիքի և մասնագիտական կարողությունների փոխանցում, ուսանողի ձեռքբերումների գնահատում և այլն: Հարցմանը մասնակցած ուսանողների **42,4%-ը** նշել է, որ բավարարված է մասնաճյուղում առցանց ուսուցման կազմակերպումից, **42%-ը՝** բավարարված է մասամբ, իսկ **15,6%-ը** բավարարված չէ: Ու քանի որ առցանց ուսուցումից չբավարարված ուսանող կա, ապա ուրեմն մասնաճյուղը դեռևս խնդիրներ ունի լուծելու: Նախ վերհանելու ուսանողների առցանց

կրթությունից բավարարված չլինելու պատճառները, ապա հնարավորինս լուծել դրանք հետագայի համար։

Նշենք, որ հարցման շրջանակներում բաց հարցերի միջոցով փորձել ենք վեր հանել այդ խնդիրները, առանձնացնելով ըստ ուսանողների առցանց ուսուցման **դրական և բացասական** կողմերը։

Ուսանողները նշել են առցանց ուսուցման հետևյալ **դրական կողմերը**։ Նրանք գտնում են, որ առցանց ուսուցումն առաջին հերթին ժամանակի և ֆինանսների խնայողություն է, անկախ գտնվելու տեղից մասնակցության ապահովում է, իսկ մասնագիտական տեսանկյունից՝ արտակարգ իրավիճակում անհրաժեշտ կրթություն ստանալն է, իրենց ինքնուրույն սովորելու պատասխանատվության մեծացումն է, կազմակերպվածության և պարտաճանաչության ավելացումն է և այլն։

Առցանց ուսուցման **բացասական կողմերից** ուսանողները հիմնականում առանձնացրել են տեխնիկական խնդիրները՝ կապված անհրաժեշտ միջոցների բացակայության, ինտերնետ կապի բացակայության կամ թույլ աշխատանքի հետ, նշել են առողջական խնդիրները, որոնք առաջանում են համակարգչի առջև երկար նստելուց, գտնում են, որ դասաժամերի տևողությունը առցանց ուսուցման դեպքում երկար է և ծանրաբեռնվածությունը չափից շատ։

Չմոռանանք, որ առցանց ուսուցման ամենաբացասական կողմն իհարկե մարդկային շփման բացակայությունն է։

Ուսանողներն առցանց ուսումնառության արդյունավետ կազմակերպման համար կատարել են մի շարք առաջարկություններ։ Նրանք առաջարկում են նվազեցնել դասաժամերի տևողությունը և քանակը, էապես նվազեցնել ոչ մասնագիտական դասընթացների ծանրաբեռնվածությունը, փոխել քննությունների ֆորմատը և բոլորն ավարտել ստուգարքով։ Իսկ դասախոսներից պահանջում են, որ և՛ դասերի, և՛ քննությունների ժամանակ հետևողական լինեն և պահանջեն, որ ուսանողները միացնեն իրենց տեսախցիկները և այլն։

Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժին